Հայ-Ռուսական
համալսարանի ՀՀ ԲՈԿ-ի
իրավագիտության 063

(Հասցե 0051, Հայաստանի
Հանրապետություն, ք. Երևան, Հովսեփ
Էմինի փողոց, 123)

01.08.2023

ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, Վարազդատ Հովիկի Սուքիասյանի

Անդրանիկ Արամի Սիմոնյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Օպերատիվ հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրները հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ- հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ.

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում հրապարակային պաշտպանությանը ներկայացված Անդրանիկ Սիմոնյանի գիտական ուսումնասիրությունը նվիրված է օպերատիվ հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության

հիմնախնդիրներին, ինչպես նաև նշվածով պայմանավորված հանցագործությունների կանխարգելմանը և քննությանը: Ընտրված թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ այն հայրենական իրավագիտության մեջ քրեական վարույթ և ՕՀԳ իրականացնող մարմինների փոխգործողությանը նվիրված առաջին համալիր հետազոտությունն է: Բացի այդ, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պայմաններում քրեական վարույթ իրականացնող և ՕՀԳ իրականացնող մարմինների փոխգործողություններն էականորեն նոր մակարդակի վրա են հայտնվել, որպիսի պայմաններում փոխգործողության արդյունքում առաջացող հիմնախնդիրներն ունեն տեսական և պրակտիկ իմաստավորման կարիք:

Թեկնածուական ատենախոսությունը և նրա սեղմագիրը բովանդակային և կառուցվածքային առումով, համապատասխանում են նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին այն պատրաստված է թեմային առնչվող հիմնական աղբյուրների վերլուծության հենքով:

Գիտական աշխատությունը կազմում է 142 էջ, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության իրավական, փորձառական և մեթոդաբանական հիմքերը: Բացի այդ, ներածության մեջ հիմնավորված է նաև աշխատանքի գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում (էջեր՝ 15-53) հեղինակի կողմից ուսումնասիրվել է հանցագործությունների կանխարգելման իրավական բնույթը, որը ներառում է հանցագործությունների հասկացությանը և նրա բաղադրատարրերին առնչվող հարցերը, օպերատիվ հետախուզական գործունեության և նրա կիրառման պայմանների և միջոցառումների վերլուծությունը, տեսական հիմքերն ու կազմակերպման մարտավարությունը,

հանցագործությունների կանխման իրավական հիմքերը, նրա կազմակերպչական ձևերը:

Ատենախոսության երկրորդ գլխում (էջեր՝ 54-77) ուսումնասիրված են հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործակցության տեսաիրավական հիմքերը: Բացի դրանից, նշված գլխում լուսաբանվում են քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործակցության կազմակերպաիրավական հիմքերն ու ձևերը:

Գիտական աշխատության երրորդ գլխում (էջեր՝ 78-128) պարզաբանված են ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության արդյունավետության կատարելագործման ուղղությունները: Ուսումնասիրված են ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության համակարգմանը վերաբերող հարցերը, համակարգման արդի մոդելներն ու տեսակները, փոխգործակցության մարտավարությունը, մասնավորապես, հանցագործության քննության պլանավորման փուլերն ու սկզբունքները և դրանց դասակարգման վերաբերյալ հեղինակի մոտեցումները, ՕՀԳ արդյունքների մասին հասկացությունը և դրա կիրառման տակտիկան, ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության խնդիրները:

Թեկնածուական ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է աշխատանքի կառուցվածքին և ընտրված թեմային: Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են և համարժեքորեն փաստարկված: Դրանք վստահաբար ունեն ինչպես տեսական, այնպես էլ ընդգծված գործնական նշանակություն, քանի որ լիարժեքորեն կարող են օգտագործվել թե՛ քրեադատավարական օրենսդրության կատարելագործման և թե՛ իրավակիրառական պրակտիկայի զարգացման գործում:

Հատկապես կարևոր է ընդգծել այն, որ հեղինակը քրեադատավարական նորմերի և քննչական պրակտիկայի համակարգային վերլուծության արդյունքներով հիմնավորել է այն գաղափարը, որ *«ՕՀԳ-ի արդյունքների օգտագործման հնարավորություն»* եզրույթն անհրաժեշտ է ընկալել որպես քննչական ստորբաժանումների և ՕՀԳ իրականացնող մարմինների միջև փոխգործողության կազմակերպում:

Չնայած այն բանին, որ աշխատանքը կատարվել է բավականին բարձր մակարդակով, այնուամենայնիվ աշխատանքում կան դրույթներ, որոնք վիճահարույց են:

Առաջին. Հեղինակը 2-րդ գլխի 2-րդ պարագրաֆի վերջում (72-րդ էջ) նշել է, որ *«հրատապ է նաև համապարասխան գերատեսչական իրավական ակտերի ընդունումը, որով կորոշակիացվեն փոխգործողության քրեադատավարական և կազմակերպական կարգերի սահուն փոխհարարերակցությունը»*, թեպետ ընդհանուր առմամբ հեղինակն ուրվագծել է փոխգործակցության ուղիները, սակայն ցանկալի կլիներ հստակ ներկայացվեր նոր քրեադատավարական իրավակարգավորումների համատեքստում այդ գերատեսչական ակտերում կոնկրետ փոխգործողության ո՞ր ձևերը պետք է ներառվեն:

Երկրորդ. Հեղինակը հակիրճ անդրադարձ է կատարել ՕՀԳ իրականացնող մարմինների միջգերատեսչական փոխգործակցության ձևերից մեկին՝ տեղեկատվության փոխանցմանը (71 էջ), սակայն աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե ներկայացվեր քրեական վարույթ իրականացնող մարմնին օպերատիվ տեղեկության փոխանցման եղանակների (տեղեկության ծավալի որոշման) հետ կապված հարցերը, որոնք մինչ օրս վիճահարույց են գիտական գրականությունում:

Երրորդ. *«ՕՀԳ-ի և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության զարգացման միտումները»* վերտառությամբ 3-րդ գլխի 3-րդ պարագրաֆում անդրադարձ է կատարվել մեծամասամբ ՕՀԳ արդյունքների վերլուծությանը, այլ ոչ թե փոխգործողության զարգացման միտումներին:

Չորրորդ. Ցանկալի կլիներ նաև աշխատանքում տեսնել նաև օպերատիվ հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության արտասահմանյան երկրների փորձը:

Նշված նկատառումները, սակայն, չեն նսեմացնում հեղինակի կողմից կատարված հետազոտությունը, այն հանդիսանում է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք, որում լուծվել են այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն քրեական դատավարության իրավունքի զարգացման համար:

Եզրակացություն: Անդրանիկ Արամի Սիմոնյանի իրավաբանական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Օպերատիվ հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրները հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում» թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, արդիական, նորույթ պարունակող համալիր գիտական ուսումնասիրություն է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին:

Ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ - հետախուզական գործունեության տեսություն») մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու Վ.Հ. Սուքիասյան

Վ.Հ.Սուքիասյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

Հայ-Ռուսական համալսարանի
Գիտական քարտուղար Ռ.Ս.Կասաբարովա
բ.գ.թ.